ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի դեկտեմբերի 22-25-ը Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Զարուհի Բաթոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Թեհրան, Իրանի Իսլամական Հանրապետություն, 22-25-ը դեկտեմբերի, 2019 թ.

4. **Հրավիրող կողմը.**
   Իրանի Իսլամական Հանրապետության կոոպերատիվների, աշխատանքի և սոցիալական բարեկեցության նախարարություն

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն աշխատանքի և սոցիալական հարցերի ոլորտում հայ-իրանական աշխատանքային խմբի առաջին նիստին, «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև աշխատանքի և սոցիալական հարցերի բնագավառում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագրից (այսուհետ՝ Հուշագիր) բխող համատեղ Գործողությունների ծրագրի ստորագրում

6. **Քննարկված թեմաները.**
   Ս.թ. դեկտեմբերի 22-ից 25-ը Թեհրանում տեղի ունեցավ աշխատանքի և սոցիալական հարցերի ոլորտում հայ-իրանական աշխատանքային խմբի առաջին նիստը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև աշխատանքի և սոցիալական հարցերի բնագավառում համագործակցության մասին» 2011 թ. Փոխըմբռնման հուշագրից բխող համատեղ Գործողությունների ծրագիր ստորագրելու և երկկողմ ոլորտային համագործակցության ուղղությունները հստակեցնելու նպատակով:

   Այցը տեղի ունեցավ ի կատարումն ս.թ. հուլիսին Թեհրանում կայացած Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 16-րդ նիստի արդյունքում

ստորագրված Փոխըմբռնման հուշագրի Գ) գլխի 3-րդ՝ «Կոոպերացիա, աշխատանք և սոցիալական ապահովություն» կետի 3.2 ենթակետի, որում արձանագրված է, որ հիմք ընդունելով 2011 թվականի Հուշագրի 4-րդ հոդվածը՝ իրանական կողմն իր պատրաստակամությունն է հայտնում 2019 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում Թեհրանում կազմակերպել աշխատանքային խմբի առաջին համատեղ նիստը՝ Գործողությունների ծրագրի նախագիծը քննարկելու և հետագա համագործակցության ուղղությունները և շրջանակները հստակեցնելու նպատակով:

Այցը տեղի ունեցավ ԻԻՀ կոոպերացիայի, աշխատանքի և սոցիալական բարեկեցության նախարար Մոհամադ Շարիաթմադարիի հրավերով:

Կարևորելով երկու երկրների միջև ոլորտային համագործակցության հետագա զարգացման անհրաժեշտությունը՝ կողմերը համաձայնության եկան քայլեր ձեռնարկել փորձի, մասնագետների և տեղեկատվության փոխանակման միջոցով երկկողմ հարաբերությունների ընդլայնման և համագործակցության մակարդակի բարձրացման ուղղությամբ, մասնավորապես՝ աշխատանքի, զբաղվածության, ձեռներեցության, սոցիալական ապահովության, կանանց, երեխաների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, մասնագիտական և տեխնիկական կրթության ոլորտներում:

Համատեղ աշխատանքային խումբն արձանագրեց 2011 թ. ստորագրված Փոխըմբռնման հուշագրի կետերի գործնական իրագործման կարևորությունը: Քննարկումների արդյունքում ավարտին հասցվեց Հուշագրից բխող համատեղ Գործողությունների ծրագիրը, որը ստորագրվեց դեկտեմբերի 23-ին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանի և ԻԻՀ կոոպերացիայի, աշխատանքի և սոցիալական բարեկեցության նախարար Մոհամադ Շարիաթմադարիի կողմից:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
Դեկտեմբերի 23-ին տեղի ունեցավ նախարար Զարուհի Բաթոյանի հանդիպումը ԻԻՀ կոոպերացիայի, աշխատանքի և սոցիալական բարեկեցության նախարար Մոհամադ Շարիաթմադարիի հետ: Իրանական կողմը նշեց, որ այցը շրջադարձային երևույթ է ոչ միայն աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտում կապերի խորացման, այլև երկու երկրների հարաբերությունների համապարփակ զարգացման համատեքստում:

Նախարարների կողմից ընդգծվեց հարևան երկու երկրների ավանդաբար սերտ հարաբերությունները, պատմական կապերն ու ընդհանրությունները, իրանահայ համայնքի ներդրումը Իրանի բարգավաճման գործում:

Նախարար Բաթոյանը, մասնավորապես, շեշտեց, որ 2018 թ. թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանում տեղի են ունենում աշխատանքի և սոցիալական ոլորտի լայնածավալ բարեփոխումներ, որոնց հիմքում դրված է աշխատանքի խրախուսումը: Սոցիալական դժվար իրավիճակից դուրս գալու համար ՀՀ կառավարությունը կարևորում է արժանապատիվ աշխատանքի ապահովումը, և պետությունը դիտարկվում է որպես այդ հնարավորությունների առանցքային ստեղծողը: Այս համատեքստում նշվեց, որ օգտակար կլինի ծանոթանալ Իրանի փորձին աշխատանքի խրախուսման հարցում հնարավորությունների ստեղծման առումով, սոցիալական խոցելի խմբերի, մասնավորապես՝ կանայք, երեխաներ, տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, իրավունքների պաշտպանության ուղղությամբ վարվող քաղաքականությանը: Նախարարը նշեց նաև, որ ստորագրվող Գործողությունների ծրագիրը նոր լիցք կհաղորդի մեր համատեղ աշխատանքին, և փաստաթուղթը հանդիսանում է քաղաքական կամքի դրսևորում համագործակցությունն ընդլայնելու և դրանում ներառված դրույթները կյանքի կոչելու համար: Անդրադարձ կատարվեց սոցիալական տարբեր ոլորտներում ընթացող աշխատանքներին և ծրագրերին, ներկայացվեցին ոլորտային առաջնահերթություններն ու սպասվող արդյունքները, ուրվագծվեցին հետագա համագործակցության ուղղությունները:

Այցի շրջանակներում կայացավ այցելություն «Նոավարի Ազադի» նորարարական տեխնոլոգիաների արդյունաբերական ստարտափ կենտրոն և «Փարդիզ» տեխնոլոգիական համալիր, ինչպես նաև ողնաշարի հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի իրանական կենտրոն, որտեղ հանդիպում տեղի ունեցավ ԻԻՀ կոոպերատիվների, աշխատանքի և սոցիալական բարեկեցության փոխնախարար և Իրանի սոցիալական բարօրության կազմակերպության նախագահ Ղոբադի Դանայի հետ: Հայկական պատվիրակությունն այցելեց նաև «Մոշիրիե» արհեստի և տեխնիկայի դպրոց, որտեղ հանդիպում տեղի ունեցավ ԻԻՀ կոոպերատիվների, աշխատանքի և սոցիալական բարեկեցության փոխնախարար և Արհեստների ուսուցման և տեխնիկայի կենտրոնի տնօրեն պարոն Հաշեմիի հետ:

Նախարար Բաթոյանը հանդիպեց նաև Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Ս. Արք. Սարգսյանի և իրանահայ համայնքի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում ներկայացրեց Հայաստանում ընթացող բարեփոխումները, մասնավորապես աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտում, աղքատության կրճատմանն ուղղված ծրագրերը, պատասխանեց իրանահայ համայնքին հուզող հարցերին: Երկուստեք ընդգծվեց, որ նախարար Բաթոյանի այցը մեծապես կնպաստի երկկողմ կապերի ընդլայնմանը, Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը Իրանում:

Ընդհանուր առմամբ, այցը հիանալի առիթ հանդիսացավ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում երկու երկրների միջև համագործակցությանը նոր թափ հաղորդելու, լավագույն փորձին և նորարարական նախաձեռնություններին ծանոթանալու, կառուցողական երկխոսության խթանման համար: Համատեղ գործողությունների ծրագրի ստորագրումը լրացուցիչ և հզոր խթան կհանդիսանա երկկողմ ոլորտային համագործակցությունն ինստիտուցիոնալ հիմքերի վրա ամրապնդելու և կապերն ընդլայնելու համար:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ինչպես նշվեց 6 և 7 կետերում, դեկտեմբերի 23-ին ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև աշխատանքի և սոցիալական հարցերի բնագավառում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագրից բխող համատեղ Գործողությունների ծրագիրը: Գործողությունների ծրագիրը նախատեսում է համագործակցություն հետևյալ ոլորտներում. տեխնիկական և մասնագիտական վերապատրաստում; աշխատանքի և զբաղվածության ոլորտ; սոցիալական ապահովություն: Նախատեսվում է ձևավորել Կողմերի ներկայացուցիչներից բաղկացած համատեղ հանձնաժողով, որը կմշակի Գործողությունների ծրագրի առաջընթացի վերաբերյալ տարեկան զեկույց: Ծրագիրը կնքվել է հինգ տարի ժամկետով:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց աշխատանքային խմբի երկրորդ հանդիպումն անցկացնել Երևանում՝ 2020 թ. երկրորդ կիսամյակում՝ Գործողությունների ծրագրի կիրարկման աշխատանքային օրակարգը քննարկելու և համատեղ գործողությունների ժամանակացույցը կազմելու նպատակով:

Նախարար Բաթոյանը Հայաստան այցելելու հրավեր հղեց ԻԻՀ կոոպերացիայի, աշխատանքի և սոցիալական բարեկեցության նախարար Մոհամադ Շարիաթմադարիին՝ աշխատանքային խմբի երկրորդ հանդիպմանը մասնակցելու նպատակով:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկում եմ քայլեր ձեռնարկել այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների

իրագործման ուղղությամբ: Մասնավորապես, առաջարկում եմ 2020 թ. սկզբին միջգերատեսչական համապատասխան աշխատանքներ մեկնարկել աշխատանքային խմբի երկրորդ հանդիպումը հաջորդ տարվա երկրորդ կիսամյակում Հայաստանում պատշաճ կերպով կազմակերպելու և իրանական կողմին հյուրընկալելու ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:
26.12.2019